# 44

1. Վշտաց աշխարհեն Քեզ կաղաղակեմ,
Ով բարձրերուն մեջ բնակող Տեր,
Հոգիս կճնշվի մեղքերուս բեռեն,
Ողորմած Փրկիչ, գթա՛ ինծի:

Իմ թշվառ հոգին հանգիստ կփնտրե,
Ես շատ հոգնած եմ ունայն կյանքես,
Սփոփանք չունիմ, սիրտս կոտրած է,
Ողորմած Փրկիչ, գթա՛ ինծի:

2. Անառակ որդին հոր տունը թողուց՝
Հաճույք փնտրելու Քեզմե հեռու,
Բայց անապատին մեջ մոլորեցավ,
Ողորմած Փրկիչ, գթա՛ ինծի:

3. Ես շատ խաբվեցա սուտ խոստումներեն,
Ծողոքորթ աշխարհն կողոպտեց զիս,
Ու կպտտիմ անոթի, ծարավ,
Ողորմած Փրկիչ, գթա՛ ինծի:

4. Սրտանց կզղջամ ու կապաշխարեմ,
Աղի արցունքով կողբամ մեղքերս,
Պիղծ ու անարժան ես Քեզի կուգամ,
Ողորմած Փրկիչ, գթա՛ ինծի: